Չեխիայի Հանրապետության ոչ կառավարական շահույթ չհետապնդող կազմակերպությունները

Հեղինակ: Սարա Պոկորնա, Ազորա ՀԿ, Պետրա Ռեզկա 12, Պրահա 4, Չեխիայի Հանրապետություն



Սույնը ոչ-կառավարական հատվածի (սեկտորի) կոալիցիաների, դրանց աշխատանքների և արդյունքների հակիրճ ներածություն է: Չեխիայի Հանրապետության ՀԿ-ների մասին ավելի լավ պատկերացում կազմելու համար ընթերցողի ուշադրությանն ենք տրամադրում ներկայիս իրավիճակի և պատմության մասին որոշակի տեղեկություններ: Այդ նպատակով կարևոր է հասկանալ նաև *արմատները (grassroots)*, քանի որ դրանք շահույթ չհետապնդող հատվածի առանցքային դերակատարներն են, միևնույն ժամանակ նրանց իրավիճակը պարզ չէ, ի տարբերություն միջազգային հասարակական կազմակերպությունների գրասենյակների:

1. Չեխիայի Հանրապետության շահույթ չհետապնդող կազմակերպությունները

1989 թվականից ի վեր Չեխիայի ՀԿ դաշտի պատկերը զգալիորեն փոխվել է: Չնայած այն հանգամանքին, որ հեղափոխությունից անմիջապես հետո չկար դաշտը կարգավորող որևէ մանրամասն և պատշաճ օրենսդրություն, սակայն պետությունը շատ օժանդակող և լիբերալ մոտեցում որդեգրեց, ինչը անշուշտ պայմանավորված էր այդ ժամանակաշրջանի քաղաքացիական նախաձեռնությունների զարթոնքով: Օրենսդրությունը մասամբ փոփոխվեց այն ժամանակ, երբ Չեխիայի Հանրապետությունը անդամակցեց ԵՄ-ին. տարբեր տեսակի ՀԿ-ների միջև ավելի հստակ տարբերակում ներդրվեց, որը զուգորդված էր հանրային միջոցների ընդունման/օգտագործման առավել խիստ կանոններով: Ընդհանուր առմամբ, ԵՄ-ին անդամակցելուց առաջ իրավիճակը կայուն էր, իսկ պետության մոտեցումը 1990-ականների սկզբներին օժանդակող, սակայն տասնամյակի վերջում այդ մոտեցումը նվազելով առավել չեզոքացավ: ԵՄ-ին անդամակցելուց հետո Չեխիայի հասարակական կազմակերպությունները կորցրեցին օտարերկրյա դոնորների մեծ մասին, սակայն մյուս կողմից, նրանց հնարավորություն ընձեռվեց օգտվել ԵՄ կառուցվածքային ֆոնդերից: Սակայն սա 2008 թվականի ճգնաժամի պատճառ հանդիսացավ, որին բախվեցին ՀԿ-ները: Ճգնաժամի պատճառը 2008 թվականին ԵՄ ֆինանսավորման ծրագրի առաջին (2003-2007թթ) շրջանից երկրորդին (2008-2017թթ) անցնելու ժամանակահատվածում ֆինանսավորման գործընթացում 10 ամսյա բացն էր, որը հիմնական պատճառը այն էր, որ կառավարությունը դանդաղում էր եվրոպական ֆոնդերի երկրորդ ալիքից դրամական միջոցներ հատկացնելու գործընթացում: Այս բացը հանգեցրեց որոշ կազմակերպությունների փլուզմանը: (Černý, 2012)

Ոչ կառավարական ոլորտը սովորաբար ներառում է մշակույթի, հուշարձանների և արվեստի, գիտության և ուսումնասիրությունների, առողջապահության և սոցիալական ծառայությունների, շրջակա միջավայրի պահպանության և կրթության, մարդու իրավունքների պաշտպանության, համայնքային զարգացման,

երեխաների և երիտասարդների հետ աշխատանքի, հանգստի/վերականգնողական աշխատանքների և սպորտի հետ կապված գործունեություն: Մեկ այլ որոշակի ոլորտ վերաբերում է հենց ՀԿ-ներին ուղղված աջակցությանը՝ հանրային կապեր, տեղեկատվական ծառայություններ, ֆոնդերի հայթայթմանը ուղղված խորհրդատվություն և այլն: Սա համապատասխանում է ոչ առևտրային կազմակերպությունների դասակարգման միջազգային կարգերին, որոնք ներառում են նաև արհմիություններին, միջազգային կազմակերպություններին, քաղաքացիական և շահերի պաշտպանության խմբերին:

Բացի իրենց նպատակային ոլորտից, ՀԿ-ները կարող են դասակարգվել նաև ՀԿ-ների ոլորտի համակարգային վերլուծության համար հետաքրքիր այլ մոտեցումներով: Օրինակ, կազմակերպությունները կարող են դասակարգվել որպես ծառայություններ մատուցող և շահերի պաշտպանություն իրականացնող կազմակերպություններ: Մեկ այլ դասակարգմամբ, որը նույնպես գործում է Չեխիայում, ՀԿ-ները բաժանվում են իրենց անդամների շահերի պաշտպանությամբ զբաղվող և հասարակության բարօրությանը ուղղված գործունեություն իրականացնող կազմակերպությունների:

Չեխական ՀԿ-ներին կարելի է բաժանել մի քանի խմբերի. առաջինը ներառում է հանգստի/ժամանցի, հիմնականում սպորտի կազմակերպման գործունեություն իրականացնող կազմակերպություններ: Սրանք այն կազմակերպություններն են, որոնք ստեղծվել են իրենց անդամների շահերից ելնելով (անդամներին օժանդակելու համար): Երկրորդ խմբի կազմակերպությունները տրամադրում են սոցիալական և առողջապահական ոլորտի ծառայություններ, լրացնելով կամ նույնիսկ փոխարինելով պետության կողմից մատուցվող ծառայությունները: Վերջին խմբում ընդգրկված են, կազմակերպություններ զարգացման և մարդասիրական օգնություն տրամադրող կազմակերպություններ, շահերի պաշտպանության կազմակերպություններ և այսպես կոչված «հովանոց կազմակերպություններ», որոնք ներկայացնում են ընդհանուր հետաքրքրություն ուեցող ՀԿ-ների խմբեր, պաշտպանում են իրենց շահերը, ապահովում ցանցային հնարավորություններ և տեղեկատվություն: Չեխական հովանոց

կազմակերպությունները հաճախ անդամակցում են նմանատիպ միջազգային կազմակերպություններին, և որպես այդպիսին, որոշակի ազդեցություն են ունենում ունեն ԵՄ գործընթացների վրա:

Տեղական կազմակերպությունների տեսանկյունից առկա են որոշակի տարբերություններ ավանդական և 1989թ.-ից հետո ստեղծված կազմակերպությունների միջև:

Այս երիտասարդ կազմակերպությունները հակված են ունենալ հորիզոնական կառուցվածք. ավանդական կազմակերպությունները ունեն ավելի կոշտ հիերարխիա (ստորակարգություն) և հորիզոնական կորպորատիվ հաղորդակցության ավելի ցածր աստիճան: Ժամանակի ընթացքում այս երիտասարդ ՀԿ-ները նույնպես սկսեցին իրենց կառուցվածքը ուղղահայաց կազմակերպել, օրինակ, վերը նշված «հովանոց» կազմակերպություններում. որոշ (համ)ազգային կամ միջազգային կազմակերպություններ կենտրոնացել են և որոշակի ներքին կառուցվածքներ և հիերարխիա ստեղծել: Չերնին ասել է. «ՀԿ հատվածում ավելի բարձր կառույցների ստեղծման անհրաժեշտությունը առաջացել է 1990-ականների վերջերին գոտիավորման, ռազմավարական պլանավորման և ԵՄ կառուցվածքային ֆոնդերին դիմել պատրաստվելու արդյունքում: Այդ ժամանակ շատ դժվար էր որևէ տեսակի ցանց ստեղծելը (Vajdová 2001a, 2001b), իսկ ամենաարդյունավետ ցանցերը, նրանք էին, որ ստեղծվել էին հետաքրքրության բնագավառում, ինչպիսիք են Zelený kruh-ը (Կանաչ շրջան) շրջակա միջավայրի համար, Երեխաների և երիտասարդության խորհուրդը, ազգային սպորտային ֆեդերացիաները և այլն ... "»: (Černý, 2012):

Չեխիայի օրենսդրությունը սահմանում է յոթ տեսակի ՀԿ-ներ: Դրանք են գրանցված ասոցիացիաներ/միություններ (zapsané spolky), գրանցված ինստիտուտներ (zapsané ústavy), համայնքային բարեգործական կազմակերպություններ (obecně prospěšné společnosti), օժանդակ միավորումներ (pobočné spolky), հիմնադրամներ (nadace), դրամագլխային հիմնադրամներ (endowments) և եկեղեցական կազմակերպությունները (církevní organizace):

Գրանցված ասոցիացիան/միությունը ամենատարածված ձևն է, իսկ ՀԿ-ներին կարգավորող օրենքները բավական բարդ են, ներառյալ «Քաղաքացիական օրենսգիրքը», «Առևտրային օրենսգիրք» և, իհարկե «Հարկային օրենսգիրքը»:

Գրանցված ասոցիացիայի հիմնադրման գործընթացը պարզ է՝ կան որոշ պաշտոնական պահանջներ (հիմնադիր անդամներ, կանոնադրություն ...) և ՀԿ ռեգիստրում ներառվելու դիմում: ՀԿ Ռեգիստրը վարում է Արդարադատության նախարարությունը, որը կարող է ՀԿ գրանցումը մերժել միայն վեց պատճառով. այդ թվում՝ սխալ/անհասկանալի նպատակի դեպքում (իրավիճակներ, երբ ասոցիացիան կոչվում է ֆուտբոլային ակումբ, սակայն որպես գործունեության ձև նշված է ձկնորսությունը): Նման դեպքերում դիմումը վերադարձվում է նպատակը հստակեցնելու առաջարկությամբ: Նման պաշտոնական պահանջներից բացի, գրանցումը կարող է մերժվել այն դեպքում, եթե կազմակերպության նախատեսված գործողությունները խախտում են օրենքը (օրինակ՝ Քրեական օրենսգրքի Հոդված 198ա-ի խախտումը, մարդկանց որոշակի խմբերի նկատմամբ ատելության քարոզչություն, կամ նրանց իրավունքների և ազատությունների սահմանափակում): Գրանցված ասոցիացիայի գործունեությունը չի կարող արգելվել եթե այն քրեական տարր չի ներառում:

1.1. ՀԿ-ները թվերով

ՀԿ սեկտորը զարգացել է քաղաքացիական հասարակության զարգացման հետ միասին: Այդ պատճառով, զարմանալի չէ, որ Չեխիայում ՀԿ-ների թիվը 1990 թ.-ի 3,879 կազմակերպությունից աճել է և 2017 թվականին հասնել մոտ 129.000-ի: ՀԿ ների բազմազանությունը արտահայտելու նպատակով օրենսդրությունը նույնպես փոփոխվել է և 1990թ.-ի հետ համեմատած երբ գոյություն ուներ այսպիսի կազմակերպությունների ընդամենը մեկ տեսակ՝ քաղաքացիական ասոցիացիա, 2017 թվականին ունենք ՀԿ-ների յոթ տեսակ: Գրանցված միությունները ամենատարածվածն են (դրանց թիվը ավելի քան 93 հազար է): Պատկերացում կազմելու համար նշենք, որ օրինակ տեղական մարզական ակումբները սովորաբար ստեղծվում են որպես գրանցված միություններ: Հնարավոր է նաև, որ գրանցված միություններից շատերը անարդյունավետ են և չեն գործում:

1.2 Արմատաբուխ (grassroots) կազմակերպությունները Չեխիայի Հանրապետությունում

«Grassroots» (արմատաբուխ, արմատընթեր, բազային, համայնքային, ակունքային) եզրույթը հաճախ է օգտագործվում շահույթ չհետապնդող սեկտորում: «Grassroots» եզրույթի բացատրությունը տալն այնքան էլ դյուրին չէ ելնելով այն կազմակերպությունների, շարժումների կամ միությունների բազմազանությունից որոնց մենք *արմատաբուխ (Grassroots)* ենք անվանում, ինչպես նաև նրանց փոփոխվող բնույթից: Որպես կանոն *արմատաբուխ* կազմակերպությունները աշխատակիցներ չունեն, այդ պատճառով նրանք հիմնված են կարճաժամկետ (որոշակի ծրագրի շրջանակներում կատարվող) և կամավորական աշխատանքի վրա: Ավելի լավ հասկանալու համար դրանք կարելի է են նկարագրել հետևյալ կերպ. «Մի կողմից, կան կազմակերպություններ, ինչպիսիք են օրինակ կամավոր հրշեջ բաժանմունքները կամ այգեգործների միությունը, որոնք որոշակի համայնքում իրականացվում են իրական կամավորական ինքնօգնության գործունեություն: Միևնույն ժամանակ, դրանք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների օրինակ են, որոնք գոյություն են ունեցել տասնամյակներ շարունակ: Մյուս կողմից այն *արմատաբուխ* նախաձեռնություններն ու շարժումներն են, որոնք ձգտում են հասարակության մեջ փոփոխությունների հասնել: Այսպիսի կազմակերպություններին բնորոշ է ժամանակավոր բնույթը և նպատակին հասնելուց հետո դրանք դադարում են գոյություն ունենալ: Դրա պատճառը հավանաբար այն է, որ խնդիրը, որը նրանք փորձում էին լուծել, լուծվել է. կամ նրանք հաստատել են իրենց դիրքորոշումը և դարձել ինստիտուցիոնալ կազմակերպությունների մաս, ներառվել պետական մարմինների կամ խոշոր մասնագիտական կազմակերպությունների օրակարգում: Ամեն դեպքում, նրանք դադարում են *արմատաբուխ* (grassroots) կազմակերպություն լինել»: (V. Černý 2012)

Արմատաբուխ կազմակերպությունները բազմաթիվ խնդիրների են բախվում, որոնցից ամենամեծը կարողությունների և ֆոնդերի բացակայությունն է: Արդյունքում նրանք տուժում են թույլ ռազմավարական պլանավորման, անբավարար ֆինանսական կառավարման, աշխատողների քանակի մշտական

տատանումների և տեխնոլոգիաների անբավարար օգտագործման պատճառով: Դրանք հիմնականում փոքր կազմակերպություններ են, որ դժվար իրավիճակում են, քանի որ չունեն ԵՄ ավելի մեծ դրամաշնորհների կառավարելու հնարավորություն, ինչը նրանց հնարավորություն կընձեռեր որոշակի ժամանակահատվածի համար կայունություն ապահովել: Նրանք չունեն նաև առավել խոշոր միջոցներ փնտրելու և հայթայթելու կարողություն և այդ պատճառով կախված են տեղական պետական կառավարման համակարգից, որը հաճախ անկանխատեսելի է, ինչպես նաև մասնավոր դոնորներից և անդամավճարներից: Այս իրավիճակը, վերջին հաշվով անհնար է դարձնում կազմակերպական պլանավորումը և զարգացումը: Մեկ այլ հաճախակի հանդիպող խնդիր է այն փաստը, որ հաստատված հայտերի բաշխվող միջոցները տրամադրվում են ըստ ժամանակացույցի, ինչը գործնականում հանգեցնում է նրան, որ դրանցով ծածկվում են որոշակի ժամանակահատվածի համար արդեն կատարված գործողությունների ծախսերը, ինչը, իհարկե, դրանից տուժած ՀԿ-ների գործունեությունը էլ ավելի է դժվարացնում: Օրինակ, տարվա համար տրամադրվող միջոցները կարող են փոխանցվել ապրիլ ամսին, ինչը նշանակում է, որ կազմակերպությունը ստիպված է մի քանի ամսվա բացը ժամանակավորապես վճարել սեփական միջոցներից և սպասել փոխհատուցման: Փոքր կազմակերպությունների համար դա մեծ խնդիր է, քանի որ նրանք սովորաբար բավարար պահուստային միջոցներ չունեն «սպասելաժամանակի» մեջ ներդնելու համար:

Տեղական մակարդակներում նույնպես *արմատաբուխ* կազմակերպությունները հայտնվում են մի իրավիճակում երբ պայքարում են որոշակի սահմանափակ միջոցների կամ հաճախորդների համար, կամ պայքարում են մասնավոր կամ պետական կազմակերպությունների դեմ:

Օրինակ, «Ժամանցային և մշակութային կազմակերպությունները (որոնք կազմում են Չեխիայի Հանրապետության *արմատաբուխ* կազմակերպությունների մեծ մասը) մասնավոր հատվածի և կոմերցիոն ծառայություններ մատուցողների հետ իրենց հարաբերությունները մեծ մասամբ ընկալում են որպես խնդիր: Օրինակ,

կոմերցիոն վարձավճարների վճարման պահանջը պատճառ է հանդիսացել, որ որոշ հասարակական կազմակերպություններ կորցրել են վարձակալած տարածքներ օգտագործելու հնարավորությունը հատկապես այն տարածքներում, որտեղ տեղական ինքնակառավարման մարմինները շուկայական վարձավճարներ են պահանջում»: (Černý 2012)

Այլ կազմակերպությունների հետ համագործակցելու տեսանկյունից, *արմատաբուխ* կազմակերպությունները հաճախ բախվում են հասարակության համար իրենց կարևորությունը չընկալելու, մյուս ծառայություններ մատուցողների հետ անբավարար համակարգման և համագործակցության, իսկ հաճախ էլ իրական կյանքի պայմաններից հեռու և դրանց չհամապատասխանող ֆորմալ պահանջների խնդրներին: Նրանց դրդում են կատարել այնպիսի պահանջներ, որոնք չեն նպաստում իրենց գործողություններին և նույնիսկ ավելի են դժվարացնում դրանց իրականացումը:

Արմատաբուխ կազմակերպությունների գործունեության համար անհրաժեշտ է ստեղծել կայուն միջավայր, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ֆինանսավորման հստակ պայմաններով և երկարաժամկետ պլանավորմամբ, որպեսզի ապահովվի պետական կառավարման գործողությունների ընկալելիությունը և այնպես, որ պետական պաշտոնյաները հասկանան այդպիսի կազմակերպություններին: Կարևոր է նաև աջակցել այնպիսի միջավայրի կայացմանը, որտեղ տարբեր կազմակերպություններ ստիպված չեն մրցակցել միմյանց, կամ մասնավոր կամ պետական մարմինների դեմ: Նշված երկուսին պետք է աջակցել *արմատաբուխ* կազմակերպության գործունեության և դրանց նշանակության մասին իրազեկվածության բարձրացման միջոցով:

Ազգային և միջազգային մակարդակով *արմատաբուխ* կազմակերպությունները հաղորդակցվում են հարթակների և հովանոց կազմակերպությունների միջոցով (եթե իհարկե հաղորդակցվում են), որտեղ նրանք կարող են ձևավորված ՀԿ-ների նման հավասար անդամներ լինել:

2. ՀԿ-ների և Կառավարության միջև համագործակցություն

1992թ.-ին Չեխիայի Հանրապետությունում ստեղծվեց *Հիմնադրամների խորհուրդ*, որը հետագայում, 1998 թ.-ին, դարձավ *Հասարակական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարական խորհուրդ*: Այս խորհրդի անդամներն են ինչպես պետական մարմինների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Խորհուրդը հավաքագրում, քննարկում և կառավարությանն է ներկայացնում ՀԿ-ներին վերաբերող նյութեր, ՀԿ-ների գոյության և գործունեության համար պատշաճ/համապատասխան միջավայր ստեղծելու նպատակով: Այս նյութերի քննարկման առարկա են հանդիսանում պետական սուբսիդիաները (լրահատկացումները), օրենսդրական և քաղաքական միջոցառումները: Այսպիսով, նրանց գործունեությունը չափազանց զգալի ազդեցություն է ունենում փոքր կազմակերպությունների վրա, որոնց ֆինանսական միջոցների մեծ մասը հիմնականում հիմնվում է և պետական միջոցներից ֆինանսավորման վրա: Այն աջակցում է նախարարությունների, այլ գործակալությունների և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը ՀԿ-ների աջակցության գործում: Հետևաբար, այն հանդիսանում է նաև մարմին, որը կարող է աջակցել միջգերատեսչական համագործակցությանը, այդ միջավայրը առավել համասեռ ու հստակ դարձնելով: Այն ուսումնասիրում, վերլուծում և ԵՄ-ում ՀԿ-ների իրավիճակի վերաբերյալ, ինչպես նաև ՀԿ-ների և համապատասխան միջոցառումների մասին տեղեկատվություն է հրապարակում:

2.1 Պետական մարմինների և ՀԿ-ների միջև համագործակցություն ռազմավարական փաստաթղթերի մշակման գործում

Նախարարությունների և ոչ կառավարական հատվածի փոխհարաբերությունները կախված են այն հանգամանքից թե արդյոք նախարարությունը կարիք ունի և պետք է շփվի ՀԿ-ների հետ: Սրանով են բացատրվում առանձին նախարարությունների միջև գոյություն ուեցող տարբերությունները: Կենտրոնական մակարդակի համեմատ, տարածաշրջանային համագործակցությունը շատ ավելի լավ վիճակում է: ՀԿ-ի ներգրավվածությունը նախարարության աշխատանքներում կախված է մի

քանի գործոններից, օրինակ. փորձագիտական մակարդակով, ՀԿ-ի և նախարարության միջև շփման մակարդակի բովանդակությամբ և շահերի համընկնմամբ: Այնուամենայնիվ այստեղ ամենակարևորը ՀԿ-ների նկատմամբ նախարարության թափանցիկության աստիճանն է, ինչպես նաև ներգրավված լինելու նկատմամաբ ՀԿ-ների հետաքրքրվածությունը: Նախարարությունները երկու տեսակի մոտեցում ունեն. մի կողմից դա բաց մոտեցումն է, որի դեպքում ՀԿ-ների հետ հաճախակի խորհրդակցություններ են իրականացվում և վերջիններիս ակտիվ ներգրավում հիմնականում վերանայման գործընթացներում: Մյուս կողմից, երբեմն թափանցիկության աստիճանը շատ ցածր է, և նախարարները զբաղվում են միայն գործընկերների սելեկտիվ ընտրությամբ, եթե այդպիսիք կան, վերջիններիս, կոնֆլիկտներից խուսափելու նպատակով, ներգրավում միայն փաստաթղթերի վերջնական հաստատման ժամանակ: Հետևաբար, դա կախված է այն հանգամանքից թե արդյոք, նախարարությունը պատրաստ է թույլ տալ, որ մյուս կողմերը նույնպես միանան գործընթացին և շահագրգռված է այդ հարցերում նրանց ներուժի ներդրմամբ, թե ավելի շատ հակված է վերահսկելու իր ոլորտը, որպեսզի հնարավորինս քիչ դերակատարներ մասնակցեն գործընթացներին:

2.2 ՀԿ-ների դերը արտաքին քաղաքականության մեջ

ՀԿ-ի դերը արտաքին քաղաքականության մեջ յուրահատուկ ոլորտ է: Չեխիայի Հանրապետությունը ունի *Միջազգային զարգացման համագործակցության խորհուրդ*, որտեղ *Չեխիայի զարգացման համագործակցության ֆորումը* (FORS) ներկայացված է որպես ասոցիացված անդամ: FORS-ն ընդամենը խորհրդակցական դեր ունի, սակայն իրավունք ունի ներկայացնել առաջարկներ, առաջարկություններ և կարծիքներ: Գոյություն ունի նաև *Չեխիայի զարգացման գործակալություն*, որը պատասխանատու է չեխական համագործակցության զարգացման համար, հատկապես հանդես գալով դոնորի դերում: Այն հաճախ ՀԿ-ների զարգացման ծրագրեր է ֆինանսավորում, որոնցով ՀԿ-ները ծրագրերն են իրականացնում ինչպես նաև աջակցում են *Չեխիայի զարգացման գործակալությանը* դրանց հատկորոշման և ձևակերպման հարցում: Մեկ այլ

կառույց է Արտաքին գործերի նախարարության *Մարդու իրավունքների և անցումային քաղաքականության օժանդակության բաժինը*: Այն ընտրում, կառավարում և ֆինանսավորում է անցումային քաղաքականությունների և մարդու իրավունքների աջակցությանն ուղղված ծրագրեր և գործողություններ: Ընդհանուր առմամբ ՀԿ-ները արտաքին քաղաքականությունների նկատմամբ «արձագանքող» դերում են և դրանք ակտիվորեն ձևավորելու ձգտում կամ ցանկություն չունեն:

2.3

Իրավիճակը կարելի է հակիրճ նկարագրել հետևյալ կերպ. կառավարական մակարդակում գործում է *ՀԿ-ների կառավարական խորհուրդը*, որը պատասխանատու է Չեխիայի Հանրապետությունում ՀԿ-ի կարգավիճակի և օժանդակության համար: Այն մասնակցում է ՀԿ ոլորտի պայմանների սահմանման գործընթացին և ազդում դրանց փոփոխության վրա: Պետական մարմինների նկատմամբ Հկ-ների դիրքորոշումը տարբեր է, իսկ համագործակցության աստիճանը մեծապես կախված է առանձին նախարարությունների հայեցակարգային փաստաթղթերից, նրանց սովորական գործելակերպից և աշխատակազմի անդամներից:

Արտաքին քաղաքականության ոլորտը շատ տարբեր է նաև այն պատճառով, որ հենց ՀԿ-ներն են, որ առաջարկում և իրականացնում են բազմաթիվ զարգացման և մարդասիրական ծրագրեր և արժեքավոր գործընկերներ են հանդիսանում այս ոլորտում ունեցած իրենց փորձի շնորհիվ: Ինչը մեծապես տարբերվում է արտաքին քաղաքականության դեպքում առհասարակ, որտեղ ՀԿ-ները միջամտելու որևէ ձգտում չունեն:

3. Օրենսդրության փոփոխությունների, օրենսդրական նախաձեռնությունների և օրենքների ընդունման նպատակով կոալիցիաների ձևավորում - գործնական օրինակներ

3.1 ԴԵՄԱՍ (DEMAS)

DEMAS-ը (Association for Democracy Assistance and Human Rights – Ժողովրդավարության աջակցության և մարդու իրավունքների ասոցիացիա) 2008 թ. -ին Մարդու իրավունքների ոլորտում ժողովրդավարական գործընթացներին աջակցելու համար ստեղծված հարթակ է: Նրա նպատակը տեղական և արտասահմանյան ՀԿ-ների, դոնորների, պետական հաստատությունների, քաղաքական գործիչների, միջազգային կազմակերպությունների կամ վերլուծական կենտրոնների գործընկերների հետ բանակցություններում այս ոլորտում գործող ակտիվ ՀԿ-ներին ներկայացնելն է: Այն աշխատում է Չեխիայի մարդու իրավունքների և ժողովրդավարացման գործունեության տեսանելիության բարձրացման ուղղությամբ և միջազգային համագործակցության նպատակով միջոցներ ու հնարավորություններ է փնտրում:

ԴԵՄԱՍ-ը մասնակցում է նաև օրենսդրության վերանայման գործընթացներին: Օրինակ, 2016 թ.-ին, *Měj se k světu (Հասնել աշխարհին) նախաձեռնության* միջոցով, մասնակցել է Չեխիայի կառավարության կողմից մշակված «*Չեխիա 2030» ռազմավարական փաստաթղթի* վերանայման ու քննարկման աշխատանքներին: Այս փաստաթուղթը Չեխիայի երկարաժամկետ զարգացման գերակայությունները սահմանող ռազմավարական աշխատանքների շրջանակ է, որը ներկայացնում է Չեխիայի ներկա և ապագա սերունդների կյանքի որակի բարելավմանը միտված երկարաժամկետ զարգացման գերակայությունները:

Համակարգային խնդիրներին անդրադառնալու նպատակով ԴԵՄԱՍը 4 (չորս) աշխատանքային խմբեր է ստեղծել. Արևելյան գործընկերության, Ռուսաստանի,

Արևմտյան Բալկանների և Եվրամիության համար: Անհրաժեշտության դեպքում ստեղծվում են այլ աշխատանքային խմբեր, օրինակ՝ Մերձավոր Արևելքի համար: ԴԵՄԱՍ-ը *Մարդու Իրավունքների և Ժողովրդավարության Ցանցի (HRDN - ՄԻԺՑ)* ակտիվ մասնակից է: Մասնակցում է հանդիպումների, համատեղ հայտարարությունների և հետազոտությունների, ինչպես նաև իր անդամներին տեղեկացնելով ՄԻԺՑ-ի գործունեության մասին: Նրա անդամ կազմակերպությունների թվում են միջազգային կազմակերպությունների չեխական գրասենյակները, ինչպիսիք են *Amnesty International-ը, Transparency International Չեխիայի Հանրապետություն*, չեխական խոշոր և փոքր կազմակերպությունները ինչպիսիք են *«People in Need» (Մարդիկ կարիքի մեջ), «Ֆորում 2000» հիմնադրամը, Քաղաքացիական Բելառուս միջազգային ասոցիացիան, Պրահայի արքեպիսկոպոսական թեմը* և այլն:

2016 թ.-ին DEMAS-ը մասնակցեց Եվրոպական պառլամենտի համար *«Do's & Dont's» (Անել և չանել)* նյութի կազմմանը և հետագա տարածմանը: Սա եվրոպական պառլամենտի և նրա անդամների համար ուղեցույց է, որը սահմանում է մարդու իրավունքների պաշտպանների հետ աշխատելու հանրային դիվանագիտության հիմնական կանոնները: DEMAS-ը իր դիրքորոշումը ներկայացրեց ի պատասխան Չեխիայի Հանրապետության նախագահների, վարչապետների և Չեխիայի խորհրդարանի երկու պալատների նախագահների Չեխիայի և Չինաստանի միջև հարաբերություններին վերաբերող բաց նամակին, որում նրանք անդրադարձան Դալայ Լամայի և կառավարության որոշ անդամների միջև տեղի ունեցած հանդիպմանը: Հետագայում ԴԵՄԱՍ-ի դիրքորոշմանը հավանություն տվեցին *Češi Tibet podporují (Չեխերը աջակցում են Տիբեթին), և Potala and Lungta (Պոթալա և Լունգթա)* կազմակերպությունները: Այս դիրքորոշումը լայնորեն լուսաբանվեց ինչպես չեխական, այնպես էլ միջազգային լրատվամիջոցներում:.

3.2 Պետության վերակառուցում

Պետության վերակառուցումը նախաձեռնություն է, որը 2013 թվականից զգալիորեն ազդել է քաղաքականության վրա: Այս նախաձեռնության գաղափարը ՀԿ-ների, մարզերի բնակչության, ընկերությունների և քաղաքական գործիչների միջև կապ հաստատելն էր որպեսզի վերջիններս հավանություն տային այն օրենսդրությանը, որը ըստ *Պետության վերակառուցման* նախաձեռնության կարևոր նշանակություն ուներ ֆունկցիոնալ ժողովրդավարության համար: Դրա նպատակը, միչև 2017թ–ը փորձագետների (հակակոռուպցիոն օրենսդրության բնագավառում մասնագիտացված մոտավորապես. 40 փորձագետների) կողմից հատկորոշված 9-ը ընդունված հահակոռուպցիոն օրենքներ ունենալն էր, որպես պետական ինստիտուտների և քաղաքական կուսակցությունների աշխատանքի բարելավմանը ուղղված կարևոր ներդրում: *Պետության վերակառուցումը* նախաձեռնության երաշխավորողները այս ծրագրում ներգրավված հինգ կազմակերպությունների՝ *Oživení (Վերածնունդ), Naši Politici (Մեր քաղաքական գործիչները), Centrum aplikované ekonomie (Կիրառական տնտեսագիտության կենտրոն), Otevřená společnost (Բաց հասարակություն) և Frank Bold (Ֆրանկ Բոլդ)* ներկայացուցիչներ են, որոնք նախաձեռնել են ամբողջ ծրագիրը և վերահսկել դրա համակարգումը

Այդ օրենքներն են.

- Քաղաքական կուսակցությունների և նախընտրական քարոզչության թափանցիկ ֆինանսավորում,
- Պաշտոնը զբաղեցնելու (պաշտոնավարման) առաջին օրվա դրությամբ ակտիվների էլեկտրոնային հայտարարագրում,
- Առցանց տվյալների բազայում պայմանագրերի բացահայտում,
- Անանուն բաժնետոմսերի դադարեցում,
- Վերահսկող խորհուրդներում մասնագիտական առաջադրում,
- Պետական/հանրային կառավարման ապաքաղաքականացում,

- Քաղաքական խոչընդոտներից զերծ Դատախազություն,
- Թափանցիկ օրենսդրական ընթացակարգ,
- Չեխիայի Գերագույն աուդիտի գրասենյակի վերահսկողության լիազորությունների ընդլայնում:

Սկզբում *Պետության վերակառուցում* նախաձեռնության պատվիրակները հանդիպում էին պատգամավորներին և քաղաքական կուսակցություններին, խնդրելով նրանց ստորագրել հայտարարություն, նշելով, որ քվեարկելու են *Պետության վերակառուցման* առաջարկած հակակոռուպցիոն օրենսդրության օգտին: Նախաձեռնությունը ստորագրեցին 141 քաղաքական գործիչներ, որոնք հետագայում ընտրվեցին խորհրդարան: Նախաձեռնությունը սատարեցին հետևյալ քաղաքական կուսակցությունները. *ČSSD (Չեխիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն), ANO 2011 (Դժգոհ քաղաքացիների ակցիա 2011), TOP 09 (Ավանդույթների պատասխանատվության բարգավաճում), KDU-ČSL (Քրիստոնեա-ժողովրդավարական միություն - Չեխոսլովակիայի ժողովրդական կուսակցություն), KSČM (Չեխիայի և Մորավիայի կոմունիստական կուսակցություն), Czech Pirate Party (Չեխիայի ծովահենային կուսակցություն:* Pirat Parties - Ծովահենային կուսակցությունները այնպիսի քաղաքական կուսակցություններ են, որոնց նպատակը մտավոր սեփականության, արտոնագրերի, հեղինակային իրավունքի պաշտպանության ոլորտներում օրենսդրության բարեփոխումն է: Նրանք հանդես են գալիս տեղեկատվության ազատ, ոչ առևտրային փոխանակման օգտին և անթույլատրելի են համարում այդ հիմքերով օրենքով հետապնդումը: Կուսակցությունը պաշտպանում է նաև անձնական կյանքի անձեռնմխելիությունը /ծանոթությունը Է□Մ□/), *Green Party (Կանաչների կուսակցությունը) և Změna (Փոփոխություն Կուսակցությունը*): Այնուհետև *Պետության վերակառուցումը* «Ես չեմ քվեարկում դատարկ խոսակցությունների համար» խորագրով քարոզարշավ սկսեց, որի շրջանակներում չորս միլիոն չեխական ընտանիքներին տեղեկատվական թերթիկներ բաժանեց, որոնցում նկարագրված էին ծրագրի պահանջները,

ներկայացված այն քաղաքական գործիչների և կուսակցությունների անունները, որոնք հայտարարել էին, որ կաջակցեն առաջարկվող օրենսդրությանը:

Պետության վերակառուցումը իրականացվում է երկարաժամկետ մոնիթորինգ և տեղեկացնում, թե արդյոք քաղաքական գործիչներն աջակցում են համապատասխան օրենսդրությանը և պարբերական զեկույցներ հրատարակում: Այդպիսով ընտրողները կարող են ընտրություններից առաջ ստուգել առանձին քաղաքական գործիչներին և տեղեկանալ, թե արդյոք նրանք քվեարկեցին այն օրենսդրության օգտին, որին խոստացել էին աջակցել: *Պետության վերակառուցումը* հրապարակել է առանձին քաղաքական կուսակցությունների մանրամասն «հաշվետվական քարտեր», ներառյալ կուսակցության կողմից տրված մեկնաբանությունները:

2017 թվականին ընդունվել է ինը օրենքներից հինգը: Դրանք են. *«Քաղաքական կուսակցությունների և նախընտրական քարոզչության թափանցիկ ֆինանսավորում», «Պաշտոնը զբաղեցնելու (պաշտոնավարման) առաջին օրվա դրությամբ ակտիվների էլեկտրոնային հայտարարագրում», «Առցանց տվյալների բազայում պայմանագրերի բացահայտում», «Անանուն բաժնետոմսերի դադարեցում» և «Թափանցիկ օրենսդրական ընթացակարգ»:* Այսօրվա դրությամբ բանակցային գործընթացում են ևս երեք օրենսդրական նախագծեր, իսկ ևս մեկը ըստ *Պետության վերակառուցման* լիովին անմխիթար վիճակում է (*«Պետական/հանրային կառավարման ապաքաղաքականացում»*):

Չնայած այն հանգամանքին, որ ի սկզբանե այն կենտրոնացել է նախընտրական ժամանակահատվածի վրա որին հաջորդել է օրենսդրության ընդունման ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելը, սակայն 2017 թվականի ընտրություններին հաջորդող ժամանակահատվածի համար *նախաձեռնությունը* որոշեց անցնել հետաքրքրության երեք ոլորտների, քանի որ հավատացած էր, որ նախնական մոդելը չի կարող կրկնվել: Հետաքրքրվածության այս ոլորտներն են. հակակոռուպցիոն և թափանցիկության օրենսդրության աջակցությունը, ընդունված «վերակառուցման» օրենսդրության իրականացումը պրակտիկայում և

նրանց պաշտպանությունը դրանք թուլացնելու կամ չեղյալ հայտարարելու փորձերից, ինչպես նաև Չեխիայի հանրապետությունում պատասխանատու ժողովրդավարական կառավարման հիմնարար սկզբունքների խթանումը: *Պետության վերակառուցման* տեսանկյունից օրենսդրության ընդունումը կարևոր քայլ է հանդիսացել, որը հետագայում պետք է վերահսկվի:

3.3 Կանանց կազմակերպությունների լոբբինգը ընտանեկան բռնության օրինագծի նախապատրաստման հարցում

2002թ.-ին *Bílý kruh bezpečí («Անվտանգության սպիտակ շրջանակ») և Phillip Morris ČR a.s. (Ֆիլիպ Մորիս ՉՀ)* կազմակերպությունները նախաձեռնեցին *«Ընտանեկան բռնության դեմ դաշինք»*-ի ստեղծումը: *Դաշինքի* հիմնական գաղափարը եղել է ընտանեկան բռնության դեպքերի հետ կապված համակարգային փոփոխությունների ապահովումը: Դրանից հետո, 2004 թ.-ին, օրենքի նախագիծը կազմելու համար փորձագիտական խումբ է ստեղծվել: Այդ օրենքի նախագիծը այնուհետև հավանության է արժանացել և ընդունվել որպես օրենք, որը ուժի մեջ է մտել 2007 թվականի հունվարի 1-ից՝ որպես թիվ 135/2006 Sb. Օրենք: ***Այսպիսով, մասնավոր կորպորացիան և ՀԿ-ն միասին կարողացան իրականացնել Չեխիայի պատմության մեջ ամենամեծ օրենսդրական փոփոխություններից մեկը, որն ապահովում է ընտանեկան բռնության զոհերի պաշտպանությունը, իսկ և Չեխիան դարձել է այս թեմայով ակտիվ մոտեցում ունեցող պետություններից մեկը:***

Դաշինքը սոցիոլոգիական հետազոտություն է անցկացրել Չեխիայում ընտանեկան բռնության վերաբերյալ տվյալների հավաքագրման համար, սկսել է լրատվամիջոցների քարոզարշավ նախաձեռնել, իսկ 2004 թվականին կազմակերպել է *Ազգային Կոնգրես*: *Bílý kruh-ը* իրականացրել է ընտանեկան բռնության զոհերի հետ հանդիպումներ իրականացնող փորձագետների և մասնագետների միջմասնագիտական համագործակցության պիլոտային ծրագիր,

առաջարկել համապատասխան օրենսդրության փոփոխություններ ինչպես նաև մասնագետների ու հանրության իրազեկության բարձրացման քարոզարշավներ կազմակերպել։

Սկսած 2002թ.-ից *Դաշինքը* սկսեց համագործակցել Չեխիայի հանրապետության ոստիկանության հետ։ Ոստիկանության ուժերին վերապատրաստել են *Դաշինքի* փորձագետները և ընտանեկան բռնության դեպքերին արձագանքելու, զոհի հետ ճիշտ շփվելու վերաբերյալ տեղեկություններ տրամադրել և հմտություններ սովորեցրել: 2003 – 2005թ.թ.-ի ընթացքում Օստրավայում իրականացվեց *«Միջմասնագիտական թիմ» ծրագիրը*, որը ներառում էր պետական մարմինների, տեղական պետական կառավարման և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին և իրականացվում *«Ֆիլիպ Մորիսի»* օժանդակությամբ։ Օստրավայում ստեղծվեց *«Dona Centrum» խորհրդատվական կենտրոն*, համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների կոնտակտային տվյալների բազայի ստեղծման ու թարմացման նպատակով։ Կենտրոնի նպատակն էր նաև իրականացնել ընտանեկան բռնության դեպքերի մասին հաշվետվությունների պահպանման համակարգ և այս տեղեկատվությունը հասանելի դարձնել միջմասնագիտական թիմի համար։ Կենտրոնը նաև կենտրոնացած է տվյալների մշակման, թիմի անդամների վերահսկողության, ընտանեկան բռնության դեպքերի վերաբերյալ ստանդարտացված ընթացակարգերի խորհրդատվություն և առաջարկություններ տրամադրելու վրա։ Այս ծրագիրը միտված էր ընտանեկան բռնության զոհ դարձած անձի և փորձագետի կամ պետական պաշտոնյայի միջև առաջին շփման/հանդիպման վրա։ Մարդկանց օժանդակող մասնագիտությունների վերաբերյալ լայնածավալ ուսուցում տրամադրվեց. բաժանվեցին նաև առանձին տարրերին վերաբերող ձեռնարկներ, որոնք տրամադրում էին ընտանեկան բռնության բացահայտման և զոհի հետ հաղորդակցվելու վերաբերյալ ցուցումներ։ Հանրության համար նաև տեղեկատվական թերթիկներ են հրատարակվել։

3.4 Կանաչ շրջան (Zelený kruh)

Zelený kruh-ը (Կանաչ շրջան) 27 բնապահպանական ՀԿ-ների ասոցիացիա է: Ասոցիացիայի առաքելությունն է աջակցել բնության և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտի քաղաքացիական հասարակության զարգացմանը: Այն օժանդակում է դրական օրենսդրական, ֆինանսական և այլ պայմաններին, որոնք նպաստում են ինչպես շրջակա միջավայրի արդյունավետ պաշտպանությանը, այնպես էլ քաղաքացիական հասարակության զարգացմանը: Այն պաշտպանում և նպաստում է քաղաքացիների իրավունքները շրջակա միջավայրի պահպանության ոլորտում և շահագրգռված է ոչ միայն շրջակա միջավայրի հարցերում, այլ նաև տնտեսական և սոցիալական ազդեցությամբ և համագործակցում է քաղաքական գործիչների, պետական կառավարման ներկայացուցիչների ու փորձագետների հետ:

Իր գործունեության շրջանակներում այն վերահսկում է բնապահպանական օրենքներն ու գործընթացները, այդ թվում նրանք, որոնք ազդում են բնապահպանական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների մասնակցության կարողությունների վրա: Ասոցիացիան իր անդամներին տեղեկացնում է օրենսդրության մասին, համակարգում օրենսդրական արշավները, մշակում համատեղ հայտարարություններ և վերլուծում պատգամավորի հիմնական օրենսդրությանը վերաբերող քվեարկությունը:

Zelený kruh-ը (Կանաչ շրջան) գործունեությունը ներառում է. լիգնիտի (*գորշագույն ցածրորակ ածուխ՝ 65-78 % ածխածնի պարունակությամբ /ծանոթությունը Է.Մ./*) արդյունահանման վերաբերյալ բանակցություններ, որոնց նպատակը Չեխիայի օրենսդրության մեջ Օրհուսի կոնվենցիան ներդնելու փորձ էր, ինչպես նաև *«Natura 2000»* գործողությանը ցուցաբերած օժանդակությունը, երբ կես միլիոն մարդ Եվրոպական հանձնաժողովից պահանջեցին պահպանել բնության պահպանությունը և կենդանական ու բուսական աշխարհի

վտանգված/անհետացող տեսակները վերականգնելուն վերաբերող օրենսդրությունը։

Zelený kruh-ը Nadace Via հիմնադրամի հետ համագործակցելով ներկայացրել է շինարարության մեջ արդար, արագ, ավելի լավ և պարզ որոշումներ կայացնելու վերաբերյալ դիմում: Դիմումը անդրադառնում է այն հարցին, որ որոշումների ընդունումը հաճախ երկար ժամանակ էր պահանջում, կորուստների պատճառ հանդիսանում ներդրողների համար և բացասաբար ազդում մարդկանց շրջակա միջավայրի որակի վրա։ Դիմումի հեղինակները հավատացած են, որ այդ անընդունելի իրավիճակի հիմնական պատճառը շինարարության թույլտվությունների վերաբերյալ որոշում ընդունելու բարդ և մասնատված կանոններն են և իշխանությունների ու վարչական դատարանների ոչ բավարար քանակը։ Այսպիսով, նրանք հինգ պահանջներ են ներկայացրել, որոնք այժմ փորձում են հաստատել:

Դիմումում ներկայացված արդար, արագ, ավելի լավ և պարզ որոշումներ կայացնելու վերաբերյալ պահանջները ներառում են՝

- Միասնականացնել հաստատման գործընթացը, կանոնները միասնական, հասկանալի և նվազագույն բացառություններով դարձնելու նպատակով։ Գործընթացը պետք է միանման, թափանցիկ և հեշտ է հասկանալի լինի բոլոր տեսակի շինարարությունների համար։
- Մարդիկ պետք է իրենց կյանքի որակը պաշտպանելու երաշխավորված իրավունք ունենան, հետևաբար, շինարարության հետևանքով դրա ազդեցության տակ գտնվող քաղաքացիները պետք է ունենան նույն իրավունքները ինչպիսիք ունի ներդրողը։
- Որոշումներ պետք է կայացվեն ոչ թե ֆորմալ, այլ իրավական հիմքերով։ Օրենքը պետք է հնարավորություն տա դատարաններին և իշխանություններին վերանայել բողոքները ըստ արժանիքների, այլ ոչ թե դիտարկել միայն որոշումների ֆորմալ ճշգրտությունը։

- Անհրաժեշտ է ապահովել որոշումների հարկադրաբար կայացում, քանի որ անընդունելի է շինարարության ավարտից հետո քաղաքացիների և ներդրողների միջև վեճերի լուծումը: Սա խախտում է արդար և արդյունավետ դատավարության իրավունքը և վտանգում օրենքի գերակայության նկատմամբ վստահությունը: Քանի որ նույնիսկ այն դեպքում երբ դատարանը որոշել է, որ տեղի բնակիչները ճիշտ էին, միևնույն է դատական պաշտպանության միջոցը չի աշխատում: Պոտենցիալ post-factum պաշտպանության միջոցը վնաս է պատճառում շենքի սեփականատիրոջը կամ օգտագործողին:

- Անհրաժեշտ է, որ իշխանություններն և դատարանները կարողանան ավելի արագ որոշումներ կայացնել, քանի որ թույլտվության հաճախակի հետաձգումը պայմանավորված է կանոնների հաճախակի փոփոխություններով և իշխանությունների ոչ բավարար մասնագիտական կարողություններով ու մարդկային ռեսուրսներով: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է զգալիորեն բարելավել նրանց կարողությունները: Պետությունը նաև պետք է բարելավի վարչական դատարանների կարողությունները, որպեսզի վերջիններս կարողանան առանց ծանրաբեռնվելու տեղավորվել նոր ժամկետների մեջ:

Դիմումը քննարկման փուլում է, և *Zelený kruh*-ը վերահսկում է օրենսդրական գործողություններն ու տեղեկացնում բանակցությունների մասին, փորձելով ճնշում գործադրել նպաստելով օրենսդրական փոփոխությանը:

3.5 EDUin

EDUin-ը (EDUin Կրթության տեղեկատվական կենտրոն) համայնքանպաստ միություն է, որը հիմնադրվել է 2010 թվականին, որի առաքելությունը սահմանվում է որպես կրթության մասին հասարակական

քննարկում նախաձեռնելու փորձ, հատուկ ուշադրություն դարձնելով փոփոխվող աշխարհի կարիքներին: Այն դարձել է կրթության վերաբերյալ երկխոսության հարթակ, այլ ոչ թե կենտրոնացել օրենսդրությունը փոփոխելու և որոշակի փոփոխություններ նվաճելու վրա (այն փորձում է անկողմնակալ տեղեկատվություն տրամադրել), և միավորում է կրթության հետ կապված դերակատարներին. ուսուցիչներին, գիտական աշխարհի ներկայացուցիչներին, քաղաքական գործիչներին և քաղաքացիներին, քանի որ կրթությունն այն թեման է, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն, վերաբերում է բոլորին, լինի դա ուսանող, ծնող թե՛ գործատու:

EDUin-ի հիմնական ոլորտները ներառում են համակարգված PR գործունեություն կրթության բնագավառում, ԶԼՄ-ների և մասնագիտական համայնքի միջև հաղորդակցության կազմակերպում, կրթության արդյունավետության և որակի վերաբերյալ բազմակողանի քննարկումների նախաձեռնում, մասնագետների և կրթության ոլորտի այլ շահառուների համար ցանցերի ստեղծում, հետազոտությունների, ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքների տարածում, ինչպես նաև ինքնուսուցման և ինքնակրթության մասին տեղեկատվության տարածում:

Ամեն շաբաթ *EDUin*-ը հրապարակում է իր լրատուն, *«Beduin»-ը*, որտեղ տեղեկացնում է հետազոտությունների արդյունքների մասին և դրանք թարգմանելով հասանելի դարձնում չեխ ընթերցողին, լրատուն նաև տեղեկություններ է պարունակում ներկա իրավիճակի մասին, այն ուսուցիչներին և ուսանողներին իրենց հոդվածները հրապարակելու, իսկ որոշում ընդունողներին, հասարակական գործիչներին և փորձագետներին իրենց դիրքորոշումը բացատրելու հնարավորություն է ընձեռում: Այն միևնույն թեմայի վերաբերյալ տարբեր թեմաներ է առաջարկում և փորձում տարակարծիք կողմերի ներկայացուցիչներին արտահայտվելու հնարավորություն ընձեռել: *EDUin*-ի մեկնաբանները նաև ներկայացնում են իրենց կարծիքը դրանք ավելացնելով քննարկմանը: Նրանք կազմակերպում են կլոր սեղաններ, պանելային

քննարկումներ, դասախոսություններ և սեմինարներ, որոնք մարդկանց հնարավորություն են տալիս իրապես կենդանի քննարկում անցկացնել:

EDUin-ի ծրագրերը ներառում են «*Ծնողներ բարի գալուստ*» կոմպոնենտը, որտեղ այն աջակցում է դպրոցներին, իրենց աշակերտների ծնողների հետ սերտորեն համագործակցելու և հաղորդակցվելու գործում, ինչպես նաև «*Յանկանում եմ սովորեցնել*» կոմպոնենտը, որն օգնում է ուսուցիչներին ավելի լավ ուսուցանել և փորձում ուսուցչի մասնագիտությունը գնահատելի և հեղինակավոր մասնագիտություն դարձնել, այսպիսով բարձրացնելով ուսուցչի մասնագիտության վարկը Չեխիայում և աջակցել այն անհատների ներգրավմանը, ովքեր կարող են նպաստել կրթության որակի բարձրացմանը:

EDUin-ը նաև մրցանակ է տրամադրում կրթության ոլորտում նոր մոտեցումների և ծրագրերի համար: Քաղաքապետարանների ներկայացուցիչները կարող են մասնակցել «*Կրթական քաղաքներ*» ծրագրին, որն օգնում է նրանց առավել կոնկրետացնել իրենց կրթական առաջնահերթությունները և դրանց իրականացման ռազմավարություններ գտնել: Այն օգնում է իրար հետ կապել տարբեր ոլորտների կարևոր ներկայացուցիչներին և տեղական գործընկերական հարաբերություններ ստեղծել երկարաժամկետ կրթական ռազմավարությունների իրականացման համար: Ծրագիրը կենտրոնացած է կրթության վրա բառի լայն իմաստով (ֆորմալ և ոչ ֆորմալ), օգտագործելով կրթության ոլորտում գործող բոլոր մեխանիզմներն ու հաստատությունները (դպրոցներ, գրադարաններ, երիտասարդական կենտրոններ, թատրոններ, կրթական կազմակերպություններ և այլն):

3.6 Ամփոփում

Չեխական ՀԿ-ները միավորվում են պլատֆորմներում, որոնք սովորաբար հիմնված են իրենց հետաքրքրող ոլրտների վրա: Նրանք ստեղծելով պլատֆորմներ, որոնք միավորում են ՀԿ-ներին և մասնավոր ու պետական կազմակերպություններին և միտված են որոշակի ոլորտներում համակարգային

փոփոխություններ իրականացնել: Ինչպես հովանաց կազմակերպությունները անյպես էլ նման հարթակները բանակցություններ են վարում՝ ձգտելով փոխել օրենսդրությունը: Մեր նշած պլատֆորմներից, միայն *EDUin*-ն է, որ չի ներգրավված այնպիսի գործողություններում, որոնք ուղղակիորեն կապված են օրենսդրության ստեղծման կամ փոփոխման հետ: Նրանք որպես ներկայացուցիչներ կարևոր դեր ունեն միջազգային կազմակերպություններում, որտեղ գործնականում հանդես են գալիս որպես Չեխիայի ներկայացուցիչներ:

Բացի այդ, հաշվի առնելով Չեխիայի չափերը, հեշտ է հասկանալ, թե ինչու յուրաքանչյուր ոլորտում գործող կազմակերպությունների համար գոյություն ունի ընդամենը մեկ, և ոչ ավելի, կազմակերպություն, որը միավորում է այդ ոլորտներում գործող գործող ՀԿ-ներին: Դրանք են՝ *DEMAS-ը* որպես ժողովրդավարական գործընթացներին և մարդու իրավունքներին աջակցող հասարակական կազմակերպությունների համատեղ հարթակ, *Պետության վերակառուցումը*, որը միավորում է հակակոռուպցիոն օրենսդրությամբ հետաքրքրող դերակատարներին, «*Ընտանեկան բռնության դեմ դաշինք*»-ը, որը ներկայացնում է ընտանեկան բռնության զոհերին օժանդակող կազմակերպություններին, բնապահպանական կազմակերպություններին աջակցող *Zelený kruh-ը (Կանաչ շրջան)* և կրթություն ոլորտում աշխատող *EDUin-ը (EDUin Կրթության տեղեկատվական կենտրոն)*: Այս պլատֆորմները միակը չեն, բայց նրանք իրենց հետաքրքրող ոլորտներում ամենախոշորն են, կամ այնպիսիք որոնք առավել նշանակալի իրականացված աշխատանքների ցանկ ունեն:

Որպես համատեղ պլատֆորմներ կամ նախաձեռնություններ, այդ կազմակերպություններն ավելի ուժեղ դիրք ունեն, համեմատած իրենց առանձին վերցված անդամների հետ, և, որպես այդպիսին, նրանք հաճախ ավելի հաջող դիրքերում են իրենց նպատակներին հասնելու համար: Կազմակերպությունները սովորաբար չունեն համակարգային փոփոխությունների հասնելու արդյունավետ փորձ և միջոցներ: Հետևաբար, հովանոց կազմակերպություններում ուժերի

միավորման և այլ կազմակերպությունների հետ համագործակցելը, իհարկե, տրամաբանական է և օգտակար:

4. Եզրակացություն

Վերոնշյալը հստակեցնում է, որ 1989 թվականից ի վեր Չեխիայում ՀԿ-ների զարգացումը անցում է կատարել դեպի ավելի ուժեղ համագործակցության, ինչը նաև հանգեցնում է նրանց համատեղ ջանքերի ազդեցության բարձրացմանը: Այս համատեղ պլատֆորմները և ասոցիացիաները կարողացան փոխել օրենսդրությունը, ինչը, իրոք, ՀԿ հատվածի մեծ հաջողությունն է: Քանի որ նրանք ձեռք են բերում փորձառություն, բոլոր դերակատարները սովորում են աշխատել փորձառություն ունեցող ՀԿ-ների հետ, որոնք պատրաստ են գործելու և խնդիրների լուծման վերաբերյալ նոր հայացքներ ձևավորելու ու քաղաքացիներին հանրային կյանքում ակտիվորեն ներգրավվելու հնարավորություն ընձեռել: Առավել հստակ օրենսդրությունը և միջավայրի կայունության աստիճանը զգալի ներդրում են ունեցել այս փոփոխության մեջ (թեև դեռ բարելավման ուղիներ կա): *Պետության վերակառուցումը* դրական փոփոխությունների կարևոր օրինակ է, քանի որ այն կարողացել է հաջողությամբ միավորել մասնավոր և հասարակական կազմակերպությունների ոլորտը, քաղաքացիներին և քաղաքական գործիչներին, ինչպես լոբբինգ իրականացրել օրենսդրական փոփոխությունների համար: Կարևոր է հասկանալ, որ նման նախաձեռնությունը 15 տարի առաջ շատ ավելի տարբեր պայմաններ կունենար, և հաջողության հավանականությունը, հավանաբար, ավելի ցածր կլիներ:

Գրականություն

Černý, V.: České grassroots organizace jdou do Evropy. Agora CE, 2012.
Černý, V.: «Չեխական արմատաբուխ կազմակերպությունները գնում են Եվրոպա» Agora CE, 2012 թ.

Pospíšilová, T. (2005) Oborové zastřešující organizace v občanském sektoru ČR 2005. Zpráva z výzkumu. Praha: NROS a FHS UK.

Pospíšilová, T. (2005) Տարածքային հովանոց կազմակերպությունը Չեխիայի քաղաքացիական հատվածում 2005. Ուսումնասիրության զեկույց: Պրահա. NROS a FHS UK.

Prouzová, Z.: Data a fakta o neziskovém sektoru v ČR. Rada vlády pro nestátní neziskové organizace, 2015.
Prouzová, Z.: «Չեխիայում ոչ առևտրային հատվածի վերաբերյալ տվյալներ և փաստեր: Ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների Կառավարական խորհուրդ, 2015

Բովանդակություն

1. Չեխիայի Հանրապետության շահույթ չհետապնդող կազմակերպությունները 2

1.1. ՀԿ-ները թվերով 5

1.2 Արմատաբուխ (grassroots) կազմակերպությունները Չեխիայի Հանրապետությունում .. 6

2. ՀԿ-ների և Կառավարության միջև համագործակցություն 9

2.1 Պետական մարմինների և ՀԿ-ների միջև համագործակցություն ռազմավարական փաստաթղթերի մշակման գործում 9

2.2 ՀԿ-ների դերը արտաքին քաղաքականության մեջ 10

2.3 11

3. Օրենսդրության փոփոխությունների, օրենսդրական նախաձեռնությունների և օրենքների ընդունման նպատակով կոալիցիաների ձևավորում - գործնական օրինակներ 12

3.1 ԴԵՄԱՍ (DEMAS) 12

3.2 Պետության վերակառուցում 14

3.3 Կանանց կազմակերպությունների լոբբինգը ընտանեկան բռնության օրինագծի նախապատրաստման հարցում 17

3.4 Կանաչ շրջան (Zelený kruh) 19

3.5 EDUin 21

3.6 Ամփոփում 23

4. Եզրակացություն 25

Բովանդակություն 26